ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 օգոստոսի 2014 թվականի N 321-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանարապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանարապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով <<Շենացնենք մեր գյուղը>> հասարակական կազմակերպության նախագահ՝ Անահիտ Թովմասյանի 2014 թվականի օգոստոսի 4-ի գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով <<Շենացնենք մեր գյուղը>> հասարակական կազմակերպությանը հատկացնել՝ 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Գումարը դուրս գրել <<Շենացնենք մեր գյուղը>> հասարակական կազմակերպության նախագահ՝ Անահիտ Թովմասյանի անունով:

3. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի օգոստոսի 07
ք. Հրազդան

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2014 թվականի օգոստոսի 7-ի N 321-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Անահիտ Թովմասյան	ՀՀ Կոտայքի մարզ գ. Արգել	70 000	